ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 մայիսի 2023 թվականի N 247-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգնաձոր, Մալիշկա բնակավայր, Կենտրոնական փողոց, 1/1 ավտոտեխսպասարկման կայան հասցեում կառուցված ինքնակամ կառույցի (ավտոտեխսպասարկման կայանի) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 . 12 . 2005թ.-ի թիվ 2387-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 30.11.2006թ.-ի թիվ 1730-Ն որոշումների պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 23.12.2022թ.-ի թիվ 154-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Եղեգնաձոր համայնք, Մալիշկա բնակավայր Կենտրոնական փողոց, 1/1 ավտոտեխսպասարկման կայան հասցեում գտնվող ըստ չափագրման հատակագծի 87.60 քմ ներքին մակերեսով և 107.4 քմ արտաքին մակերեսով կառուցված, գործառնական նշանակությամբ ինքնակամ ավտոտեխսպասարկման կայանը և դրա

սպասարկման համար առանձնացված 0 . 02 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողատարածքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023UWNUWV) համարել Եղեգնաձոր համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական: Կառույցին տալ հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Մալիշկա, Կենտրոնական փողոց, 1/1 ավտոտեխսպասարկման կայան:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Թաթուլ Երանոսի Մովսիսյանին: Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օրինականացման համար սահմանված չափով և կարգով գումարների վճարումից և այդ փաստը հավաստող գրավոր ապացույցը /վճարման անդորրագիր, տեղեկանք և կամ քաղվածք/ ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում Եղեգնաձորի համայնքապետարանի անունից Գնորդի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2023թ. մայիսի 02
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մայիսի 2023 թվականի N 248-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ N 02 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.9-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ և 124-րդ կետերը, շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետի վերաբերյալ նախագծային կազմակերպության կողմից ներկայացված հիմնավորումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) տարածքային կենտրոնի վերանորոգման համար՝ Եղեգնաձոր համայնքի ղեկավարի կողմից 2020 թվականի ապրիլի 30-ին տրամադրված N 02 շինարարության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել ևս 1 (մեկ) տարի 8 (ութ) ամիս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2023թ. մայիսի 02
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մայիսի 2023 թվականի N 249-Ա

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 154-Ն որոշման 2-րդ հավելվածի 13-րդ կետը և քաղաքացի Հովիկ Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հանգուցյալներ՝ Նորիկ Արտաշես Հարությունյանին, Լուսիկ Արամ Հարությունյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Եղեգնաձոր գյուղ Մալիշկա, 9-րդ փողոց, 7 հասցեում գրանցված բնակելի առուցապատման հողը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17052022-10-0027) վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Մալիշկա, 1-ին փողոց, 19/1 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2023թ. մայիսի 02
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 մայիսի 2023 թվականի N 250-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1] հոդվածի երկրորդ պարբերության, 162-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի և 84-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ավարտել 2023 թվականի ապրիլի 19-ին հարուցված վարչական վարույթը, ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնող անհատ ձեռնարկատերերին տրամադրել երկօրյա ժամկետ՝ համապատասխան խախտումը վերացնելու համար:

2. Սահմանված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում համապատասխան անձինք՝ համաձայն հավելվածի, կենթարկվեն վարչական պատասխանատվության՝ տուգանքի ձևով, որի չափը կազմում է յոթանասուն /70 000/ հազարից մինչև մեկ հարյուր /100 000/ հազար ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին առձեռն հանձնելու հաջորդող օրվանից՝ յուրաքանչյուրն իր մասով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2023թ. մայիսի 02
ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձորհամայնքիղեկավարի
2023 թվականի մայիսի 2-ի թիվ 250-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՉ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԵՐՈՒՄ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

ՀՀ	Անվանում	ՀՎՀՀ
1	Ա/Ձ Ալինա Սարգսյան	76810119
2	Ա/Ձ Սուսաննա Սարգսյան	76874681
3	Ա/Ձ Անի Մարկոսյան	6501262
4	Ա/Ձ Արմենուհի Հարությունյան	76830519
5	Ա/Ձ Ենոք Նազարյան	76816733
6	Եղեգնաձորի սպիտակ տուն	0457694
7	Ա/Ձ Դինա Սարգսյան	76840373
8	Ա/Ձ Արմեն Մկրտչյան	6501401
9	Ա/Ձ Սուսան Մակարյան	76866074
10	Ա/Ձ Գագիկ Միերյան	08908736
11	Ա/Ձ Լևոն Միերյան	76816491
12	Ա/Ձ Անահիտ Բաբաջանյան	76810444
13	Ա/Ձ Ռուզաննա Բաբաջանյան	76813615
14	Արման Օսեյան	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 մայիսի 2023 թվականի N 251-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգնաձոր, Եղեգնաձոր բնակավայր, Ա. Միկոյան փողոց, 10/11 ավտոտնակ հասցեում կառուցված ինքնակամ կառույցի (ավտոտնակի) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 . 12 . 2005թ.-ի թիվ 2387-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 30.11.2006թ.-ի թիվ 1730-Ն որոշումների պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 23.12.2022թ.-ի թիվ 154-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր բնակավայր Ա. Միկոյան փողոց, 10/11 ավտոտնակ հասցեում գտնվող ըստ չափագրման հատակագծի 27.9 քմ ներքին մակերեսով և 29.6 քմ արտաքին մակերեսով կառուցված, գործառնական նշանակությամբ ինքնակամ ավտոտնակը և դրա սպասարկման համար

առանձնացված 0 . 00296 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման հողատարածքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023HSQUG9) համարել Եղեգնաձոր համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական: Կառույցին տալ հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, ք., Եղեգնաձոր, Ա. Միկոյան փողոց, 10/11 ավտոտնակ:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Հրաչյա Սերոբի Խաչատրյանին (ծնված՝ 05.04.1957թ.): Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օրինականացման համար սահմանված չափով և կարգով գումարների վճարումից և այդ փաստը հավաստող գրավոր ապացույցը /վճարման անդորրագիր, տեղեկանք և կամ քաղվածք/ ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում Եղեգնաձորի համայնքապետարանի անունից Գնորդի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2023թ. մայիսի 04
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2023 թվականի N 252-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 154-Ն որոշման 2-րդ հավելվածի 13-րդ կետը և քաղաքացի Շուշիկ Մուրադյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հանգուցյալ Ռազմիկ Վանոյի Գևորգյանին, քաղաքացիներ՝ Շուշիկ Եգորի Մուրադյանին,Վարդան Ռազմիկի Գևորգյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը և բնակելի կառուցապատման հողին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N1310525) տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գետափ, 18-րդ փողոց, 4-րդ փակուղի, 3 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2023թ. մայիսի 04
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2023 թվականի N 253-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 154-Ն որոշման 1-ին հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունը և ԱՁ Ռազմիկ Բուդաղյանի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Երևանյան խճուղի թիվ 14 հասցեում հանրային սննդի կազմակերպման և իրացման համար ԱՁ Ռազմիկ Բուդաղյանին տալ թույլտվություն՝ 2023 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2023թ. մայիսի 04
ք. Եղեգնաձոր